

պլենումը հասումացած համարից ուսապուրպիկա-  
յում քիմիական արդյունաբերության նախագծա-  
հետազոտական ինստիտուտի կազմակերպման  
հարցը, որը կօգնի ժամանակին մշակելու կառուց-  
վող օրդենական նախագծաւորելու համար կազման դո-  
կումենտացիան:

Ներկայումս Ազգութական արդյունաբերության  
պետական ինստիտուտը (ԳԻԱՊ) Հայկական ՍՍՌ  
Գիտությունների ակադեմիայի օրգանական քի-  
միայի ինստիտուտի հետ միասին գրադլում է  
քրորային նիտրովիլ միջոցով փոտոսինթեզի եղա-  
նակով կապրոլակտամի ստացման հարցով, ի  
տարրերություն կորսաքիմիայի այժմ տարած-  
ված ֆենոլային եղանակի:

Առաջին եղանակը թույլ կտա քրոր ստանայ-  
ող էլեկտրոլիտիկ եղանակով, որը Հայաստանի  
պայմաններում լարված էլեկտրաբարականսի պատ-  
ճառով կիսական հարց է դարձել:

Այդ եղանակը հնարավորություն կտա կազ-

մակերպել նաև նատրիումական սելիտրայի, կալ-  
ցինացված սոդայի և այլնի ստացման կոմպլեք-  
սային տեխնոլոգիան:

Ազգաված քրոր կարող է օգտագործվել քրոր-  
օրգանական միացությունների սինթեզով, բնական  
գագի բազայի վրա, որի կոմպլեքսային օգտա-  
գործման դեպքում կարող է ստացվել նաև մե-  
թանոլ և ամոնիակ:

Հայկական ՍՍՌ քիմիական արդյունաբեր-  
ության զարգացման 1959—1965 թթ. միջոցա-  
ռումների իրականացման շնորհիվ, յոթնամյակի  
վերջում կստեղծվի լայնորեն զարգացմած, ժամա-  
նակակից տեխնիկայի և տեխնոլոգիայի պա-  
հանջների մակարդակի վրա կազմակերպված քի-  
միական արդյունաբերություն: Այն բազա կհան-  
դիսանա քիմիական արդյունաբերության հետագա-  
րում զարգացման համար՝ ուսապուրպիկայի հում-  
քային ուսուրումների ուսցիունալ օգտագործումով:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԷԼԵԿՏՐՈՍԻԼԻԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԱՇԽՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### Գ. ՉՈԼԱԽՅԱՆ

Հայկ. ՍՍՌ ժողովագործների կեկտրատեխնիկական արդյունաբերության և սարքաշինության  
վարչության պետ

Մեր երկրի հսկայական մասշտաբներով իրա-  
կանացվող էլեկտրիֆիկացիան պահանջեց էլեկ-  
տրական մեքենաների, ապարատությայի և էլեկ-  
տրատեխնիկական նյութերի նոր տեսակների  
արտադրության կազմակերպումն ու նրանց թո-  
ղարկման գովայլ ավելցուցուրը:

Մեր ուսապուրպիկայում գումավոր մետաղների  
(պղինձ, ալյումինիտ), անթետիկ կառուցված,  
մեկուսի նյութերի և այլնի արտադրությունը  
հիմք հանդիսացավ ժողովրդական տնտեսության  
առաջավոր ճյուղերից մեկի՝ էլեկտրատեխնիկա-  
կան արդյունաբերության ստեղծման համար:

Հայաստանում էլեկտրատեխնիկական արդյուն-  
աբերության առաջին օջախը երևանի էլեկտրա-  
շարժիչների գործարանն էր, որ ստեղծվել է նախ-

կին էլեկտրավերանորոգման գործարանի բա-  
զայի վրա: Նրանից անմիջապես հետո կազմա-  
կերպվեցին կարելի, էլեկտրամեքենաշինուական և  
էլեկտրատեխնիկական գործարանները: Երևանի  
կարելի գործարանը կարևոր գեր է խաղացել ուս-  
պուրպիկայի էլեկտրատեխնիկական արդյունա-  
բերության զարգացման գործում: Նա արտադրու-  
է տեղակայման փաթուղթային հաղորդալարերը,  
լուսավորության շնորհերը, շամագային և ՍՄԳ—  
ՎՄԳ տիպի կարելները, գոմավոր գլանվածք:

1947 թվականին երևանում ստեղծվել է էլեկ-  
տրական մեքենաների արտադրության նոր ձեռ-  
նարկություն, որը մի քանի տարուց հետո վերա-  
սարքավորվել է էներգիա անվան էլեկտրամեքենա-  
շինական գործարանի՝ «Հայէլեկտրագործարանի»:

Ներկայում նա հանդիսանում է երկրի նման տեսակի խոշորագույն գործարաններից մեկը, որն իր արտադրանքը՝ I և II գաբարիտների արանսֆորմատորները, մինչև 100 կվա կարողությամբ սինիսորն գեներատորները, կոմպլեքսային արանսֆորմատորային հնթակայանները և փոխադրովի դիբելզեկարակայանները արտահանում է 26 արտասահմանյան երկրներ: 1957 թվականին սկսեց արդյունաբերական արտադրանք տալ Երևանի Էլեկտրապարատների գործարանը: Ընթացիկ տարվա ապրիլին Լենինականին ավարտվել է Էլեկտրատեխնիկական գործարանի առաջին հերթի շինարարությունը և շահագործման հանձնվել:

Այսպիսով, ետպատերագմյան 13 տարիների ընթացքում ստեղծվել է արդյունաբերության էլեկտրատեխնիկական նոր ճյուղ, որի ապրանքային արտադրանքի թողարկման ծավալը 1957 թվականին կազմել է երկրի էլեկտրատեխնիկական ապրանքների ամբողջ արտադրության 3,5%-ը: Խոկ այդ ճյուղի արտադրանքը իր տեսակարար կշռում միութինական ուսուպութիկաններում գործում է երրորդ տեղը:

Էլեկտրատեխնիկական արդյունաբերության աճի հետ միասին անցած համեմատաբար կարճ ժամանակաշրջանում աճել են բանվորների, կոնստրուկտորների, տեխնոլոգների և արտադրության զեկավարների որակյալ կադրերը:

Կազմերի ստեղծման գործում մեծ օգնություն են ցույց տվել Խարկովի, Մոսկվայի, Լենինգրադի, Բարսնշտադի, Տալլինի և յոյու արդյունաբերական կենտրոնների, կոնստրուկտորների, տեխնոլոգների և արտադրության զեկավարների որակյալ կադրերը:

Նոր արտադրության յուրացման և գիտականինիկական կադրերի պատրաստման գործում խոշոր դեր են խաղացել գիտա-հետազոտական ինստիտուտները, հատկապես, Էլեկտրադյունաբերության գիտա-հետազոտական ինստիտուտը, որի նախաձեռնությամբ 1956 թվականին «Հայէլեկտրագործարանին» առընթեր Փիլիպ է ստեղծվել:

Գիտա-տեխնիկական մտքի նոր կենտրոնը կարճ ժամանակաշրջանում վերածվեց ստեղծագործական լաբորատորիայի, որ մշակում է Էլեկ-

տրատեխնիկական մեթենաների նոր կոնստրուկցիաներ և տեսակներ: Ներկայում Փիլիպան իր բաժիններն ունի կարելի, Էլեկտրատեխնիկական և Էլեկտրալամպերի գործարաններում:

Հայաստանում սարքաշինական արդյունաբերության առաջնեկո հանդիսանում է Երևանի էլեկտրատուղարկությունը գործարանը, որը յուրացրել է տարեկան հարյուր հազարավոր սարքերի, ինչպես, օրինակ, միկրոամպերներների, միկվոլտմետրների, բարձր լարման ցուցիչների, հոսանքափոխությունների և հոսանքաչափիչ աքցանների թողարկումը: Գործարանում թողարկվող Մ-24 տիպի սարքը լայնորեն կիրառվում է սարքաշինության մեջ և էլեկտրական սիստեմներում:

Կոմունիստական պարտիայի XX համագումարն իր որոշումներում ինքիր դրեց շեշտակիութենայցման և ավտոմատացման տեմպերը արդյունաբերության մեջ, տրանսպորտում և շինարարությունում, իրականացնել անցումը դեպի ցեսների ավտոմատացումը և ստեղծել լիովին ավտոմատացված ձեռնարկություններ:

Սրտադրական պրոցեսների կոմպլեքսային մեքենայացումը և ավտոմատացումը իրականացնելու անհրաժեշտ պայմանը հանդիսանում է արդյունաբերության, տրանսպորտի և ժողովրդական տնտեսության մրաւ ճյուղերի հագեցումը բարձր արտադրողականության ժամանակակից սարքավորումով, նորագույն սարքերով և ավտոմատացման միջոցներով: Այսուելից պարզ է, թե ինչպիսի խոշոր նշանակություն է ձեռք բերում ավտոմատիկայի, Էլեկտրոնիկայի և տելեմեխանիկայի սարքերի և միջոցների արտադրությունը:

Սարքաշինական և ավտոմատացման միջոցների զարգացման գծով գիտա-տեխնիկական բազա ստեղծելու համար, Միութենական կառավարության որոշմամբ, կազմակերպվել են մաթեմատիկական մեքենաների գիտա-հետազոտական ինստիտուտը Երևանում և «Ավտոմատիկա» գիտա-հետազոտական ինստիտուտը Կիրովականում՝ քիմիկական արդյունաբերության և գունավոր մետալուրգիայի տեխնոլոգիական պրոցեսների ավտոմատացման համար: Բացի նշված ինստիտուտներից, կազմակերպվել են հատուկ կոնստրուկտորական բյուրոներ՝ «Պրոմպարիտոր»՝ Էլ-

նինականում և «Ավտոմատիկա»՝ Կիրովականում, որոնք ունեն իրենց ինքնուրուց արտադրական բազաները:

Էլեկտրատեխնիկական արյունաբերության, սարքաշինության և ավտոմատացման միջոցների հետագա զարգացման նպատակով, ընթացիկ տարրում մեր ուսուպութիկայում կազմակերպվում են նոր ձեռնարկություններ, էլեկտրամետաղակերպիկայի և կիսահղողութիւնների գործարան երևանում, որտեղ նոր պրոցեսիվ տեխնոլոգիայի՝ փոշեմետալուգիայի կիրաման միջոցով կը թողարկվեն մետաղակերամիկական կոնտակտներ, էլեկտրական մեքենաների և ապարատների տարրեր դետալներ, հաստատում մասնիչներ, ֆերրիտներ, ինչպես նաև կիսազմակերպվի կիսահղորդիչային առարկաների արտադրություն: Լենինականի միկրոէլեկտրաշարժիչների գործարանը թողարկելու է ներկառուցված ուղղվածությունով՝ միկրոէլեկտրաշարժիչներ, որոնք լայնորեն գործադրվում են սարքաշինության, ավիացիայի և արյունաբերության այլ ճյուղերում: Աևանի գործադիր մեխանիկմեների գործարանը թողարկելու է էլեկտրական գործադիր մեխանիկմեներ՝ քիմիական, մետալուգիական, էներգետիկայի և փողովական տնտեսության այլ ճյուղերի տեխնոլոգիական պրոցեսների ավտոմատացման համար: Արդյունի ճշգրիտ տեխնիկական քարերի գործարանը թողարկելու է սինթետիկ կորունդից՝ ուրիշ պարագաներու տեխնիկական քարերի գործարանում արտաքատած ճշգրիտ տեխնիկական քարեր սարքաշինության, ժամացույցների արդյունաբերության և այլնի համար: Ճշգրիտ տեխնիկական քարերի գործարանի կարողությունը նախատեսված է Կիրովականի քիմիկութինատի կառուցվող ցեխում արտադրվող սինթետիկ կորունդ-ուրիշի լրիվ վերամշակման համար:

Երևանի ժամացույցի գործարանում կազմակերպվում է գեղարվեստական ձևավորումով ձևորդի ժամացույցների արտադրությունը:

Ընթացիկ տարվա IV եռամյակում շահագործման կանճնի Երևանում ներկայում կառուցվող ուելեների գործարանը, որը թույլ հոսանքի ուելեների թողարկման գծով կիրակ երկրի մասնագիտացված գործարաններից մեկը:

Յոթամյա պլանի համաձայն բուռն զարդացում են ստանալու էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը և առանձնապես սարքաշինությունը:

Բյունն ու ավտոմատացման միջոցները, ինչպես նաև ուսուպութիկայի արդյունաբերության նոր ճյուղը՝ ուսդիութեանիկական արդյունաբերությունը:

Յոթնամյակում էլեկտրատեխնիկական արդյունաբերության գծով, գլխավոր նախահաշվի ծավալով կավարտվի այն բոլոր գործարանների կառուցվումը, որոնք մինչև 1965 թվականը հասնեն իրենց նախագծային կարողությանը:

1959 թվականից Մաղկումքում կակսվի ապակեթից և ապակեմեկուաթիչ հյուավածքների գործարանի ու էջմիածնի ՇՊԼաստմասսաներից գործարանի ապակետեքստիլիտի նոր ցեխի շինարարությունը:

Այդ նոր արտադրությունները հնարագործություն կտան ապակենովել կարելի, էլեկտրական մեքենաների, ապարատների և սարքերի արտադրությունը ապակեմանվածքով շրջանուածելու, ապակեհյուավածքներով, ապակեժապավենով և էպակապոնային հյուավածքներով մեկուացնելու համար:

«Հայէլեկտրագործարանի» կառուցվումն ավարտելուց հետո, նրա կարողությունը կավելանա երկու և կես անգամ, այդ թվում՝ մինչև 100 կլոտ կարողությամբ գեներատորների արտադրությունը՝ մոտ երկու անգամ, ուժային տրանսֆորմատորներինը՝ երկու անգամից ավելի, փոխադրությունը էլեկտրակայաններին՝ երկու անգամ:

Խիստ կավելանա կարելային ապարանքների արտադրությունը. նախատեսվում է հատկապես էմալե հաղորդալարերի մեծ աճը՝ երեսնի «Պոլի-վինիլացետատ» գործարանում՝ արտադրվելու բարձրորակ վինիֆլեքսային մեկուսի բազայի վրա:

Կավելանա էլեկտրատեղակայման առարկաների թողարկումը երեք անգամ, ինչպես նաև կընդլայնվի ասորտիմենուը:

Նախատեսված է կազմակերպել արդյունաբերական, կոմունալ և կենցաղային արմատուրայի արտադրությունը լուսմինեսցինստային լամպերի համար և էլեկտրալուսավորության արմատուրայի թողարկման ընդհանուր ավելացումը՝ 5,5 անդամ: Մագնիսական կայանների արտադրության կազմակերպման համար պլանավորվել է շածրավոր ապարատացված արտադրանության մեծացումը՝ եր-

կու անգամ, Հիմնականում՝ հաստոցաշինության համար:

Այսպիսով, 1965 թվականին ռեսպոբլիկայի էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը երեք անգամ ավելի արտադրանք կտա, քան 1958 թվականին:

Ռեսպոբլիկայի էլեկտրատեխնիկական արդյունաբերության բոլոր գործարանների կառուցումը ըստ ավարտելու համար հատկացվել է 219 մէն. ուուրի:

Սարքաշինության և ավտոմատացման միջոցների արտադրության գծով նախատեսվում են հետևյալ միջոցառումները:

«Էլեկտրոտոշպրիբոր» գործարանի վերակառուցումը և ընդայնումը՝ սարքերի թողարկումը 2,5 անգամ ավելացնելու համար:

Երեսնի սարքաշինական գործարանի ընդայնումը, որ նպատակ ունի սարքերի թողարկումն ավելացնել 5,6 անգամ և կազմակերպել նոր սարքերի՝ թիրմուկումպլեկտների, թիրմուչակումների և այլնի արտադրությունը:

Լենինականի սարքաշինական գործարանի վերակառուցումը և ընդարձակումը, մասնագիտացներով էլեկտրոնային խոնավաշափների և վիսկովիմետրների թողարկումը, որպեսզի 1965 թվականին ապրանքացին արտադրանքի թողարկումն ավելանա 4 անգամ:

Կիրովականի «Ավտոմատիկա» գործարանի կառուցման ավարտումը։ Սա հնարավորություն էստեղծի 1965 թվականին գործարանի արտադրությունը թողարկումը, 1958 թվականի համեմատությամբ, ավելացնել 14 անգամ։

Երեսնի ժամացուցի գործարանի ընդարձակումը, որը թույլ կտա ժամացուցյների թողարկումը հասցնել 2,500 հազ. հատի, այդ թվում՝ ձևորի ժամացուցյներին՝ 500 հազարի։

Օպտիկական սարքաշինության գործարանի կազմակերպումը սպեկտրային անալիզի սարքերի արտադրության համար։

Արտադրական պրոցեսների վերահսկման և կառավարման մեքենաների՝ «Մարս»—300 և «Մարս»—500 տիպի արտադրության կազմակերպումը։

Ճշգրիտ տեխնիկական քարերի գործարանի կառուցումը Արդյունում 80 մէն. ուուրլու ապրանքային արտադրանքի թողարկումով։

Գործադրի մեխանիզմների գործարանի կառուցումը Սևանում՝ տարեկան 10.000 հատ էլեկտրական գործադրի մեխանիզմների թողարկումով։

Էլեկտրոնային հաշվիչ մեքենաների գործարանի կառուցումը՝ տարեկան 85 մէն. ուուրլու արտադրանքի թողարկումով։

Մի շաբաթ նոր գործարանների շինարարության ավարտման, վերակառուցման, ընդարձակման և գործարկման համար սարքաշինության ու ավտոմատացման միջոցների գծով հատկացվում է 175 մէն. ուուրլի։ Այս գեպօպտ տվյալ ճշուղի արտադրանքի թողարկումը 1965 թվականին կավելանա ավելի քան 4 անգամ։

Ցոթնամյակի ընթացքում մեր ռեսպոբլիկան կհարստանա մի քանի նոր ձեռնարկություններով, կստեղծվի նոր, առաջավոր ճյուղ՝ ուղիղությանի կական արդյունաբերություն։ Բայց կառուցվող երկու գործարաններից, կառուցվեն ևս երեք նոր գործարաններ։

Ցոթնամյակի առաջին տարիներին կավարտվի երեսնի էլեկտրալամպերի գործարանի շինարարությունը և նրա կարողությունը լուսավորության նորմալ և լուսմինեսցենտրային լամպերի թողարկման գծով տարեկան կհասցվի մինչև 100 մէն։ Հատի։ Այս կտառնա Սովետական Միության էլեկտրալամպերի խոշորագույն գործարաններից մեկը։

Կիսահաղորդիչաշյախին նյութերի (սելեն, գերմանիում և ալյն) բազայի վրա կկառուցվեն երկու ձեռնարկություն՝ կիսահաղորդիչաշյախին համուլցիչների և կիսահաղորդիչաշյախին սարքերի գործարանները։ Նշված գործարանների, ինչպես և էլեկտրամետաղակերամիկայի գործարանի արտադրանքը կապահովվի էլեկտրոնային հաշվիչ մեքենաների, արտադրական պրոցեսների վերահսկման և կառավարման մեքենաների, նաև սարքերի ու մեքենաների կոմպլեկտավորող առարկաների արտադրությունը։

Նախատեսվում է նորագույն կորորդինատային սիստեմի ավտոմատ հեռախոսային կայանների թողարկման նոր գործարանի կառուցումը՝ տարեկան 150 հազ. համարների կարողությամբ։

Ուղիղությանի կական արդյունաբերության կիսատ կառուցումներն ավարտելու և նոր ձեռնար-

կությունների շինարարության համար հատկացվում է 157 մլն. ռուբլի:

Նոր ստեղծվող գործարանները հագեցված կլինին քարդ և բարձր արտադրողականության սարքավորումով, ժամանակակից տեխնոլոգիայով: Գործարաններում կստեղծվեն շատ լաբորատորիաներ, փորձառական արհեստանոցներ և հատուկ կոնստրուկտորական բյուրոներ:

Նոր գործարանների և արտադրությունների կազմակերպման գործում կարևոր խնդիրներից մեկը հանդիսանում է կադրերի պատրաստումը նոր կազմակերպվող ձեռնարկությունների համար: Բացի այն մասնագետներից, որոնք պատրաստվում են Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտում և ուսուցչիկայի տեխնիկումներում, հարկավոր են սարքաշինության, տեխնիկակայի, թույլ հոսանքի, վակուումային տեխնիկայի, ապակեթելի, մեկուած նյութերի, կիսահաղորդիչների և այլ մամնագետներ:

Այս խնդիրի լուծման համար անհրաժեշտ է մշակել և իրականացնել նշված մասնագետների պատրաստման պլանը, ինստիտուտի առանձին խմբերն ու կուսերը փոխադրելով ժողովրդական տնտեսության համար անհրաժեշտ մասնագիտությունների, ստեղծել նոր ֆակուլտետներ, և հատուկ դասընթացներ կազմակերպելու միջո-

ցով վերավորակավորել մասնագետներին: Հարկավոր է ապահովել առաջատար պրոֆեսիաների բանվորների և ինժեներա-տեխնիկական անձնակազմի պատրաստումը, ուղարկելով նրանց պրակտիկայի լյուս միութեական սեսպուրլիկաների գործող գործարանները, ինչպես նաև ժողովրդական դմբուկրատիայի երկրները:

Նոր գործարանների կազմակերպման գործում լուրջ հարցերից մեկը հանդիսանում է նրանց ապահովումը ու ստանդարտացին սարքավորումով և հատուկ սարքավորներով:

Նոր ձեռնարկությունների կազմակերպման գործում մեծ աշխատանք պետք է կատարեն «Հայէլեկտրագործարանին» կից էլեկտրաարդյունաբերության գիտա-հետազոտական ինստիտուտի փիլիալի և «Ավտոմատատիկա» ու «Պրոմպրիբոր» հատուկ կոնստրուկտորական բյուրոների կոլեկտիվները՝ էլեկտրական մեքնաների, ապարատների և սարքերի նոր կոնստրուկցիաներ մշակելու համար:

Էլեկտրատեխնիկական և ուղիղութիւնիկական արդյունաբերության, սարքաշինության և ավտոմատացման միջոցների նոր ձեռնարկությունների կազմակերպման ու կառուցման վիթխարի պլանի իրականացումը կվերափոխի մեր ուսուցուրլիկայի արդյունաբերության դեմքը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԶՐԵՐԻ ԻՎ ՆՐԱՆՑ ԼՑՄԱՆ ԱՃԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Վ. ՎԱՐԴԱԶԱՐՈՎ

Հայզարենանշշուրաբեսի կառավարիչ

Ներկայումս Սովետական Միությունում 42 գործարաններ տարեկան արտադրում են ավելի քան 300 մլն. կեն լիտրանոց շիշ զանազան հանքային շրերի: Այդ քանակից 45 միլիոն շիշը կամ երկրում արտադրված ամբողջ հանքային շրերի 15 տոկոսը կազմում են Հայաստանի հանքային շրերը, մինչդեռ ամերող նախառությունը Պուլաստանում Նարզան, Բորժոմի և Իմելսկայա հանքային շրերի լցումը տարեկան հազիլ էր հասնում 18 մլն. շիշ:

Մեր ուսուցուրլիկայում գրանցված 450 հան-

քային աղբյուրներից և հորատանցքերից առաջատար տեղ են գրավում օքերմուկը, «Արդնի», «Դիլիջան» և «Հանքավան» հանքային շրերը:

«Օքերմուկը» հազվագյուտ հանքային աղբյուր է, որի ջերմաստիճանը կազմում է 56—61°C: «Օքերմուկը» հանքային շրութը իր քիմիական բաղադրությամբ համանման է Կարլովի Վարի հայտնի աղբյուրին: Բժշկությունը լայնորեն օգտագործում է «Օքերմուկը» լյարդի և ստամոքսա-աղիթային տրակտի հիմնադրությունների դեպքում, ինչպիս-